

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը.

Լարա Սարգսյան,

2. Զբաղեցրած պաշտոնը.

Մթնոլորտային օդի քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ,

3. Գործուղման վայրը և ժամկետները

Այցելություն՝ Շվեյցարիայի համադաշնություն, քաղաք Ժնև՝ 2023 թվականի
հոկտեմբերի 23-25-ը:

4. Հրավիրող կողմը

Տրանսպորտի, առողջապահության և շրջակա միջավայրի համաեվրոպական
ծրագրի (THE PEP) քարտուղարություն:

5. Գործուղման նպատակը

Մասնակցություն՝ Տրանսպորտի, առողջապահության և շրջակա միջավայրի
համաեվրոպական ծրագրի (THE PEP) գործընկերության տարեկան ամփոփ հանդիպմանը
մասնակցելու համար:

Քննարկված թեմաները

Կայուն տրանսպորտի զարգացման համար կարգավորող շրջանակի ընդհանուր
նկարագիրը, ներառյալ՝

- Կայուն տրանսպորտի գործիքներ, տրանսպորտային քաղաքականության զարգացման
հնարավորություններ,
- Տրանսպորտի, առողջապահության և շրջակա միջավայրի համաեվրոպական ծրագրի
շրջանակներում իրականացվող գործընթացներ.

- Կայուն տրանսպորտում լավագույն փորձի ներկայացում,
 - Տրանսպորտից արտանետումների կրճատում, էլեկտրական տրանսպորտի զարգացում,
 - Քաղաքային տրանսպորտի կայունությունը բարձրացնելու հնարավորություններ,
 - ՎՋԵԲ-ի գործունեությունը կայուն տրանսպորտի զարգացման բնագավառում,
 - Քաղաքային տրանսպորտի կայուն քաղաքականություն
 - Ազգային շրջանակ և ծրագրեր.
 - Կայուն քաղաքային տրանսպորտ և շարժունակություն.
- Աշխատաժողովին մասնակցում էին Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի պետական և շահագրգիռ գերատեսչություններից, ինչպես նաև միջազգային կազմակերպություններից ներկայացուցիչներ:

Քայլեր՝

Կայուն տրանսպորտային խնդիրների լուծման և համագործակցության աջակցման համար առաջարկվեց ստեղծել համապատասխան հարթակ ոլորտի զարգացման ուղղությամբ՝ խոչընդոտների բացահայտման, լուծումների մարտահրավերների հաղթահարման նպատակով: Կազմակերպել ուսուցողական սեմինար դասընթացներ համապատասխան մասնագետների որակավորման բարձրացման համար:

- Տրանսպորտային միջոցների էլեկտրիֆիկացում (ենթակառուցվածք, մարտկոցներ և այլընտրանքային ռեսուրսներ), տրանսպորտի կոլեկտիվ և ոչ շարժիչային եղանակների տեղակայում և անցում (երկաթուղային, քաղաքային հասարակական տրանսպորտ, հեծանվավազք),
- Անցում դեպի ցածր կամ զրոյական ածխածնային վառելիքների (ջրածին, կենսավառելիք, կենսագազ, սեղմված բնական գազ),
- Ներդրումների մոբիլիզացում:

6. Հանդիպումները, ելույթները.

Հանդիպման նիստին ներկայացվեցին տրանսպորտային ոլորտի հավակնությունների և միջոցառումների գլոբալ շրջանակը:

Նիստերը ներկայացված էին քննարկումների ձևաչափով, որտեղ յուրաքանչյուր երկրի ներկայացուցիչ ներկայացնում էր թեմատիկ հարցադրումների մասով երկրի իրավիճակը, խոչընդոտները, կարիքները:

1, տրանսպորտային ենթակառուցվածքների մշակման և թարմացման ժամանակ, ներառյալ շարժունակության պահանջարկը, տրանսպորտային ցանցը և բեռնափոխադրումների լոգիստիկան, Կառավարությունների նկատառումները և խոչընդոտները, մարտահրավերները, հնարավորությունները և գործող լուծումները՝ ապահովելու օպտիմալ

հանրային քաղաքականություն և ներդրումներ ցածր ածխածնային քաղաքային ենթակառուցվածքների համար՝ հաշվի առնելով տրանսպորտի տարբեր եղանակները, ինչպիսիք են քայլելը, հեծանիվը, ճանապարհը և երկաթուղին:

2, էներգիայի և ռեսուրսների արդյունավետությունը ենթատեքստում անարդյունավետ օգտագործված տրանսպորտային միջոցների հեռացման, բիովառելիքի արտադրության, արտանետումների կրճատման և մարտկոցների մասով առկա խոչընդոտները, մարտահրավերները, հնարավորությունները և գործող լուծումները, վերջիններիս նվազեցմանն ուղղված միջազգայնորեն առևտրային տրանսպորտին առնչվող ապրանքների, ներառյալ տրանսպորտային միջոցների կյանքի ցիկլի, գլոբալ էներգիայի և ռեսուրսների արդյունավետությունը բարելավման հարցեր:

3, էլեկտրական մեքենաների տեղակայման խոչընդոտների, մարտահրավերների, հնարավորությունների և գործող լուծումների հետ կապված հարցեր՝ այդ թվում արագացնելու էլեկտրական մեքենաների և հանրության ընդունումը, մատչելիությունը, լիցքավորման ենթակառուցվածքը, էլեկտրաէներգիայի մատակարարումը և մարտկոցների մատակարարման շղթան,

4, զարգացող երկրներում տեխնոլոգիաների զարգացման հնարավորությունները ցածր կամ զրոյական ածխածնային վառելիքի մասով, ֆինանսական, տեխնոլոգիական և կարողությունների ներուժը և սահմանափակումները, խոչընդոտները, մարտահրավերները, հնարավորությունները և գործող լուծումները՝ ամրապնդելու սիներգիաները և կայուն զարգացման հետ փոխգիջումները լուծելու համար՝ հաշվի առնելով ցածր կամ զրոյական ածխածնի հատուկ վառելիքի բնութագրերը:

Հանդիպման վերջին նիստը տրանսպորտային ենթակառուցվածքների էլեկտրոֆիկացման համաշխարհային ներդրումային գործընթացների ներկայացումն էր, որտեղ շեշտը դրված էր հանրային տրանսպորտային համակազմի բարելավման և արդիականացման գործընթացին՝ կայուն զարգացման, սոցիալ-տնտեսական համաչափ զարգացմանը:

7. Հաղիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

ՄԱԿ-ի ԵՏՀ տրանսպորտի առողջապահության և շրջակա միջավայրի համաեվրոպական ծրագրի կողմից առաջարկվեց համագործակցության ամրապնդում, հզորացում, համատեղ աշխատանքների շարունակական փորձի փոխանակում, տեխնիկական և փորձագիտական աջակցություն: Առաջարկվեց յուրաքանչյուր մասնակից երկրի կողմից ազգային մակարդակով վերլուծել կայուն տրանսպորտային

քաղաքականության զարգացման հնարավորությունները և խոչընդոտները առաջիկա հանդիպման ընթացքում քննարկելու նպատակով:

**Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝
եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատվությունները, ակնկալվող արդյունքները**

Քննարկում-հանդիպումների ընթացքում ընդգծվեց տրանսպորտային միջոցների էլեկտրիֆիկացման հնարավորությունները, լավագույն փորձը և գործող լուծումները տրանսպորտի ոլորտում էներգիայի արդար անցման համար մեղմացման հավակնությունները և իրականացման խոչընդոտները և համապատասխան լուծումները:


Կարևորվեց արդյունավետ քաղաքականությունները և միջոցառումները, որոնք իրականացվում են գլոբալ տեսանկյունից և երկրի հատուկ փորձից:

Առաջարկվեց մեխանիզմներ ֆինանսական, տեխնոլոգիական և կարողությունների զարգացման կարիքների գնահատման և լուծման համար:

Կարևորվեց միջազգային համագործակցության շրջանակների ընդլայնումը:

Գործուղվող՝

Մթնոլորտային քաղաքականության վարչության
գլխավոր մասնագետ,
ՄԱԿ-ի ԵՏՀ տրանսպորտի առողջապահության
և շրջակա միջավայրի համաեվրոպական ծրագրի
Ազգային համակարգող՝



Լարա Սարգսյան